ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 /փոփոխված/

ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Երևանի հեռուստաաշտարակի 70մ և 130մ նիշերի սարքասրահներում և պահակային ծառայությունում օդորակման համակարգի և օդորակիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման, գնահատման և ամփոփման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.07.2026թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյանը

Անդամներ՝

Հ. Հեքիմյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը

Բացակայում է Ս. Քոչարյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

<u>Ի գիտություն</u> ընդունել, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կարիքների համար Երևանի հեռուստաաշտարակի 70մ և 130մ նիշերի սարքասրահներում և պահակային ծառայությունում օդորակման համակարգի և օդորակիչների ձեռքբերման նպատակով 2026 թվականի հուլիսի 2-ին eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում /Համակարգ/ հայտարարվել է ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը, որի շրջանակում հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2026 թվականի հուլիսի 13-ը՝ ժամը 12:00-ը, իսկ էլեկտրոնային հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2026 թվականի հուլիսի 14-ին՝ ժամը 12:00–12:30-ը ընկած ժամանակահատվածում:

2. <u>Հանձնաժողովը արձանագրեց.</u>
Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն	Հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	Հար Գրուպ 5 ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Դավիթ Բեկ, 180/26 H5r.gasparyan@yandex.com	+374 77 699 551	01096027
2	ԷԿՈՀԻԹ ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Ն.Տիգրանյան փ., 7շենք ruzanna.seyranyan@ecoville.am	+374 77 257 364	08297073

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» /Կարգ/ 32-րդ կետի 21-րդ ենթակետի՝ ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով մրցույթի շրջանակում ներկայացված հայտերը 14.07.2026-16.07.2026թթ. ընկած ժամանակահատվածում ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից և իրականացված գնահատման արդյունքում ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/27 ծածկագրով մրցույթի հրավերով /Հրավեր/ պահանջվող փաստաթղթերի մասով արձանագրվել է հետևյալը.

3.1 **ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊ ընկերության** կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /հավելված 1.3/,
- 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքի ամբողջական նկարագրում լրացված չեն ապրանքի ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիր սյունակները,
- ներկայացված դիմում հայտարարությունը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ /Փաստաթուղթը ստորագրություն չի պարունակում/

3.2 «ԷԿՈՀԻԹ» ՍՊ ընկերության հայտը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Մասնակիցների նկարագրերը և առաջարկած գները ըստ չափաբաժինների

Չափաբաժն ի համար	Cpv	Անվանում	Քանակ	Տեխնիկական բնութագիր
1	39714240/1	օդորակիչ, 24000 BTU	1 հատ	Daikin, Mitsubishi, Fujitsu General ներկայացված է կից ֆայլով
2	39714240/2	օդորակիչ, 24000 BTU	1 հատ	ներկայացված է կից ֆայլով /eauction/
3	39714240/3	օդորակիչ, 24000 BTU	1 հատ	ներկայացված է կից ֆայլով

Հ/հ	Զբաղեց-րած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	1100000	4444000	20 %	5332800	906000	20 %	1087200	
1	2	ՍԵԳ ՍՊԸ	1100000	915400	20 %	1098480	915400	20 %	1098480	
1	3	ԱՆԻ ՆԱՁԱՐՅԱՆ ԱՁ	1100000	1100000	20 %	1320000	1100000	20 %	1320000	Մերժված
2	1	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	500000	4444000	20 %	5332800	415000	20 %	498000	
2	2	ԱՆԻ ՆԱՁԱՐՅԱՆ ԱՁ	500000	500000	20 %	600000	500000	20 %	600000	Մերժված
2	3	ՍԵԳ ՍՊԸ	500000	684500	20 %	821400	684500	20 %	821400	Մերժված
3	1	«ԷԿՈՀԻԹ» ՍՊԸ	400000	500000	20 %	600000	325660	20 %	390792	
3	2	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	400000	4444000	20 %	5332800	329000	20 %	394800	
3	3	«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ	400000	333330	20 %	399996	333330	20 %	399996	
3	4	ԱՆԻ ՆԱՁԱՐՅԱՆ ԱՁ	400000	400000	20 %	480000	400000	20 %	480000	Մերժված
3	5	ՍԵԳ ՍՊԸ	400000	488700	20 %	586440	488700	20 %	586440	Մերժված

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ նիստը կասեցնել 1/մեկ/ աշխատանքային օրով՝ առաջարկելով **ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊ ընկերությանը** մինչև կասեցման ժամկետը ավարտը՝ 17.07.2026թ. ներառյալ, շտկել 3.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները: Բոլոր շտկված փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

6. <u>Հանձնաժողովը արձանագրեց.</u>

6.1 Մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊ **ընկերության** կողմից շտկվել է սույն արձանագրության 3.1 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

7. <u>Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի /Օրենք/ 34-րդ հոդվածը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.</u>

7.1 ԷԿՈՀԻԹ ՍՊ և ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը, ինչպես նաև ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատել բավարար և ընտրված մասնակիցներ ճանաչել.

1-ին և 2-րդ չափաբաժին՝	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ
3-րդ չափաբաժիններ՝	ԷԿՈՀԻԹ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր և հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /գեներացվում է Համակարգով/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

Պայմանագրերի նախագիծը Համակարգով գրությամբ կտրամադրվի ընտրված մասնակցին՝ անգործության ժամկետի ավարտից հետո՝ 4-րդ աշխատանքային օրը:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ. Հեքիմյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյան